

Արձանագրություն №5/2014-2015

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2015թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 72-ը (յոթանասուներկու):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատում (զեկ. գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան):
2. Ամբիոնի վարիչի, պրոֆեսորի և գիտական համակազմի պաշտոնների մրցութային ընտրություն (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյան, Ա. Ա. Սահակյան):
3. <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ համալսարանի ստորաբաժանումներից առաջադրված թեկնածուների ընտրություն: (զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
4. ԵՊՀ-ում <<Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների>> ծրագրի հաստատում (զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):
5. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2011-2013թթ. հարցման արդյունքների մասին: (զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
6. 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
7. ԵՊՀ ՈԻԳԸ 2013-14 ուստարվա գործունեության մասին (զեկ. ՈԻԳԸ նախագահ Մ. Ա. Մալխասյան)
8. Գիտական զեկուցում. <<Հայերենի գործածության կարգավորման խնդիրները>> (զեկ. Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Յու. Ս. Ավետիսյան)

9. Ընթացիկ հարցեր

9.1 Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի նախկին ռեկտոր Խոսե Սարուխանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին: (զեկ. ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2014-15 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին: Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը ներկայացրեց ժամանակացույցով նախատեսված հարցերը:

Որոշեցին. – հաստատել ժամանակացույցը:

2. **Լսեցին.** – **Ամբիոնի վարիչի, պրոֆեսորի և գիտական համակազմի պաշտոնների մրցութային ընտրության մասին:** Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին ամբիոնի վարիչի, պրոֆեսորի և գիտական համակազմի պաշտոնների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Եղիազարյան Արման Սամվելի	Սփյուռքագիտության ամբիոն
2.	Պետրոսյան Համլետ Լենսերի	Մշակութաբանության ամբիոն
3.	Մուրադյան Սամվել Պարզի	Հայ գրականության ամբիոն
4.	Աբաջյան Աննա Հենրիկի	Հայոց լեզվի պատմության ամբիոն
5.	Գրիգորյան Սեյրան Զավենի	Հայ նորագույն գրական. ամբիոն
6.	Զրբաշյան Աշխեն Էդվարդի	Գրականության տեսության և գրաքնն.-ան ամբիոն
7.	Կարապետյան Կարո Մնացականի	Թարգմանության տեսության և պրակտ.-ի ամբիոն
8.	Լալայան Սուսաննա Ավագի	Ռուսաց լեզվի /հուման. ֆակուլտ. համար/ ամբիոն
9.	Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի	Թյուրքագիտության ամբիոն
10.	Տոնիկյան Սոնա Ալբերտի	Արաբագիտության ամբիոն
11.	Ազյան Վահագն Ռոբերտի	Հանրային կառավարման ամբիոն
12.	Զալլմյան Նուբար Տրդատի	Դիվան. ծառայության և մասնագիտ. հաղորդ. ամբիոն
13.	Մկրտչյան Սամվել Սուրենի	Կրոնի պատմության և տեսության ամբիոն
14.	Նիզիկյան Սեմյոն Ալեքսանդրի	Ծրագրավորմ. և ինֆորմացիոն տեխնոլոգ-րի ամբիոն
15.	Հակոբյան Յուրի Ռուբենի	Թվային անալիզի և մաթ. մոդելավորման ամբիոն
16.	Պողոսյան Միքայել Պողոսի	Ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն
17.	Մարկոսյան Գագիկ Վարազդատի	Երկրաֆիզիկայի ամբիոն
18.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	Կենդանաբանության ամբիոն

Պրոֆեսորի պաշտոնի հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Զուբարյան Անահիտ Արտաշեսի	Դիսկրետ մաթեմ. և տեսական ինֆորմ. ամբիոնի պրոֆ
2.	Հակոբյան Հակոբ Ավագի	Թվային անալիզի և մաթ. մոդել. ամբիոնի պրոֆեսոր
3.	Ավետիսյան Յուրի Հովհաննեսի	Գերբարձր հաճ. ռադիոֆիզ. և հեռահաղ. ամբ. պրոֆ.
4.	Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի	Գերբարձր հաճ. ռադիոֆիզ. և հեռահաղ. ամբ. պրոֆ.
5.	Հաջյան Գևորգ Սուրենի	Ալիք. պրոցես. տես. և ֆիզիկայի ամբ. պրոֆեսոր
6.	Կարախանյան Մարտին Բսակի	Դիֆերենց. հավասարում. ամբիոնի պրոֆեսոր
7.	Սարաֆյան Վահան Վրթանեսի	Հավան. տեսութ. և մաթեմ. վիճակ. ամբ. պրոֆեսոր
8.	Գևորգյան Աշոտ Հարությունի	Ընդհ. ֆիզ. և աստղաֆիզ. ամբիոնի պրոֆեսոր
9.	Աբրահամյան Մարտին Գրիգորի	Ընդհ. ֆիզ. և աստղաֆիզ. ամբիոնի պրոֆեսոր
10.	Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի	Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
11.	Բարխուդարյան Վիգեն Գրիգորի	Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր

12.	Կրյուչկյան Գագիկ Յուրիի	Տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
13.	Սահարյան Արամ Ազատի	Տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
14.	Գրիգորյան Ռոմեն Պետրոսի	Միջուկային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
15.	Եղիազարյան Էդուարդ Մուրազի	Կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր
16.	Բաղայան Մուսաննա Միշայի	Բուսաբան. և սնկաբան. ամբիոնի պրոֆեսոր
17.	Մանասյան Մաքսիմ Գառնիկի	Սոցիալ-տնտ. աշխարհագր. ամբիոնի պրոֆեսոր
18.	Վարդանյան Վահրամ Պանդուխտի	Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
19.	Մաթևոսյան Լիաննա Բենիամինի	Ռուսաց լեզվաբ. տիպ. և հաղոր. տես. ամբ. պրոֆեսոր
20.	Գրձելյան Ռուզան Ռուբենի	Ռուսաց լեզվաբ., տիպ. և հաղոր. տես. ամբ. պրոֆեսոր
21.	Հարությունյան Վերոնիկա Նիկիտայի	Ռուսաց լեզվաբ., տիպ. և հաղորդակց. տես. ամբ. պրոֆ
22.	Սաֆարյան Վազգեն Հմայակի	Հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր
23.	Մակարյան Ալբերտ Արշավիրի	Հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր
24.	Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի	Արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր
25.	Հայկյանց Արմեն Մերուժանի	Քաղաքաց. իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
26.	Խաչիկյան Հարություն Մարտինի	Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
27.	Հովսեփյան Լիաննա Սամվելի	Ընդհանուր լեզվաբան. ամբիոնի պրոֆեսոր
28.	Հովհաննիսյան Հայկազ Ժորայի	Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր
29.	Հայրունի Աշոտ Նորայրի	Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր
30.	Մարիբեկյան Ամալյա Մարիբեկի	Կառավ. և գործարար. ամբիոնի պրոֆեսոր
31.	Բոստանջյան Վարդան Բաբկենի	Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր
32.	Զաքոյան Վլադիմիր Ռուբենի	Ֆիզիկ. դաստ. և սպորտի ամբիոնի պրոֆեսոր
33.	Ավագիմյանց Վլադիմիր Միխայիլի	Ֆիզ. դաստ. և սպորտի ամբիոնի պրոֆեսոր

Գիտական համակազմի պաշտոնների հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Ավետիսյան Համլետ Կարոյի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի գլխավոր գիտական աշխատող
1.	Մկրտչյան Գառնիկ Ֆելիքսի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի առաջատար գիտական աշխատող
2.	Ղազարյան Արմենուհի Գևորգի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի ավագ գիտական աշխատող
3.	Լալայան Ասատուր Ալեքսանդրի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի ավագ գիտական աշխատող
4.	Սեդրակյան Խաչիկ Վազգենի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի ավագ գիտական աշխատող
5.	Ավետիսյան Արա Կարապետի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի ավագ գիտական աշխատող
6.	Իսրաելյան Սամվել Սամվելի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի գիտական աշխատող
7.	Ավչյան Ռուբեն Բաբկենի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի գիտական աշխատող
8.	Մովսեսյան Հովհաննես Ավետիսի	Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի կրտսեր գիտական աշխատողի

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Օսիպյան Լիա (նախագահ)
2. Գրիգորյան Ռաֆիկ

3. Սանթրոսյան Սարգիս
4. Հարությունյան Աննա
5. Ասլանյան Հայկ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 72 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Լ. Օսիպյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Ամբիոնի վարիչի պաշտոնի քվեարկության արդյունքներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Եղիազարյան Արման Սամվելի	71	1	0
2.	Պետրոսյան Համլետ Լենսերի	68	3	1
3.	Մուրադյան Սամվել Պարգևի	70	2	0
4.	Աբաջյան Աննա Հենրիկի	64	8	0
5.	Գրիգորյան Մեյրան Զավենի	71	1	0
6.	Զրբաշյան Աշխեն Էդվարդի	70	2	0
7.	Կարապետյան Կարո Մնացականի	71	1	0
8.	Լալայան Սուսաննա Ավագի	70	2	0
9.	Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի	71	1	0
10.	Տոնիկյան Սոնա Ալբերտի	69	2	1
11.	Ազյան Վահագն Ռոբերտի	68	4	0
12.	Զալբմյան Նուբար Տրդատի	72	0	0
13.	Մկրտչյան Սամվել Սուրենի	72	0	0
14.	Նիգիկյան Սեմյոն Ալեքսանդրի	68	3	1
15.	Հակոբյան Յուրի Ռուբենի	71	1	0
16.	Պողոսյան Միքայել Պողոսի	69	3	0
17.	Մարկոսյան Գագիկ Վարազդատի	70	2	0
18.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	72	0	0

Որոշեցին. - Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Պրոֆեսորի պաշտոնի համար քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	կողմ	դեմ	անվավեր
1.	Չուբարյան Անահիտ Արտաշեսի	69	2	1
2.	Հակոբյան Հակոբ Ավագի	72	0	0
3.	Ավետիսյան Յուրի Հովհաննեսի	71	1	0
4.	Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի	72	0	0
5.	Հաջյան Գևորգ Սուրենի	71	1	0
6.	Կարախանյան Մարտին Իսակի	71	1	0
7.	Սարաֆյան Վահան Վրթանեսի	72	0	0
8.	Գևորգյան Աշոտ Հարությունի	70	2	0
9.	Աբրահամյան Մարտին Գրիգորի	71	1	0
10.	Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի	72	0	0
11.	Բարխուդարյան Վիգեն Գրիգորի	71	0	1
12.	Կրյուկյան Գագիկ Յուրիի	71	1	0
13.	Սահարյան Արամ Ազատի	71	0	1

14.	Գրիգորյան Ռոմեն Պետրոսի	72	0	0
15.	Եղիազարյան Էդուարդ Սուրազի	72	0	0
16.	Բաղայան Սուսաննա Միշայի	70	1	1
17.	Մանասյան Մաքսիմ Գառնիկի	68	2	2
18.	Վարդանյան Վահրամ Պանդուխտի	68	3	1
19.	Մաթևոսյան Լիաննա Բենիամինի	72	0	0
20.	Գրձելյան Ռուզան Ռուբենի	70	2	0
21.	Հարությունյան Վերոնիկա Նիկիտայի	65	1	6
22.	Սաֆարյան Վազգեն Հնայակի	71	1	0
23.	Մակարյան Ալբերտ Արշավիրի	71	1	0
24.	Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի	70	2	0
25.	Հայկյանց Արմեն Մերուժանի	70	2	0
26.	Խաչիկյան Հարություն Սարտինի	70	2	0
27.	Հովսեփյան Լիանա Սամվելի	72	0	0
28.	Հովհաննիսյան Հայկազ Ժորայի	69	3	0
29.	Հայրունի Աշոտ Նորայրի	71	1	0
30.	Սարիբեկյան Անայա Սարիբեկի	71	1	0
31.	Բոստանջյան Վարդան Բաբկենի	69	3	0
32.	Զաքոյան Վլադիմիր Ռուբենի	69	3	0
33.	Ավագիմյանց Վլադիմիր Միխայիլի	72	0	0

Որոշեցին - Հաստատել վերոնշյալ աշխատակիցների՝ պրոֆեսորի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված պրոֆեսորների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ընթացակարգի 33-րդ կետի:

Գիտական համակազմի պաշտոնների հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	կողմ	դեմ	անվավեր
1.	Ավետիսյան Համլետ Կարոյի	71	1	0
2.	Մկրտչյան Գառնիկ Ֆելիքսի	71	1	0
3.	Ղազարյան Արմենուհի Գևորգի	71	1	0
4.	Լալայան Ասատուր Ալեքսանդրի	71	1	0
5.	Սեդրակյան Խաչիկ Վազգենի	71	1	0
6.	Ավետիսյան Արա Կարապետի	70	2	0
7.	Իսրայելյան Սամվել Սամվելի	71	1	0
8.	Ավյան Ռուբեն Բաբկենի	72	0	0
9.	Մովսեսյան Հովհաննես Ավետիսի	72	0	0

Որոշեցին - Հաստատել վերոնշյալ աշխատակիցների՝ գիտական համակազմի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ <<ԵՊՀ ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոն>> գիտական ստորաբաժանման նիստի որոշումները և ընտրված գիտաշխատողների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ընթացակարգի 27-րդ կետի:

- Լսեցին.** - ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուների մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը համառոտ ներկայացրեց թեկնածուներին.

1.	Հարությունյան Նազիկ Կարապետի	մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2.	Ապրեսյան Մարգարիտա Հրանտի	անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
3.	Հարությունյան Էդվարդ Արզումանի	սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
4.	Հաջյան Գևորգ Մուրենի	ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր
5.	Հարությունյան Ռուբեն Միքայելի	գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
6.	Վաղարշյան Արթուր Գրիշայի	պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
7.	Աթանեսյան Արթուր Վլադիմիրի	կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
8.	Շուքուրյան Սամվել Կիմի	տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Անցկացվեց բաց քվեարկություն, որի արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված և ԵՊՀ գիտական խորհրդում ընտրված՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի վերոնշյալ անդամների ցուցակը:
2. Միջնորդությամբ հանդես գալ ՀՀ կրթության և գիտության նախարարության առջև՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության՝ Համալսարանի կողմից առաջադրված վերոնշյալ կազմը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու համար:

4. **Լսեցին** - ԵՊՀ-ում <<Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների>> ծրագրի մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանն իր ելույթում համառոտ անդրադարձ կատարեց 2010թ.-ից մեկնարկած հակակոռուպցիոն ծրագրային միջոցառումների ուղղությունները, որից հետո ընդհանուր ձևակերպումներով ներկայացրեց առաջարկվող նախագծում տեղ գտած նոր միջոցառումները: Նա նշեց, որ բազմով ներմուծվել են գործողությունների նոր ուղղություններ, մասնավորապես, շահերի բախման խնդիրը, կոռուպցիայի տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ խորքային ուսումնասիրությունների և հետազոտությունների խնդիրը, էթիկայի կանոնակարգը, կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրների դասավանդումը և այլն:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը:

5. **Լսեցին**. - ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2011-2013թթ. հարցման արդյունքների մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ներկայացրեց շրջանավարտների հարցումների մասնակցության դինամիկան 2011-13 թթ.՝ նշելով, որ հարցումների 70 տոկոսն անցկացվել է բակալավրիատի, իսկ 30 տոկոսը՝

մագիստրատուրայի շրջանավարտների շրջանում: Այնուհետև Ա. Գրիգորյանը խմբավորված ներկայացրեց շրջանավարտների կարծիքներն ու գնահատականները հարցաթերթում առաջառված թիրախային հարցերի վերաբերյալ:

Որոշեցին. – Ա. Գրիգորյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.** – **2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին:** Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը նշեց, որ «Ի Էլ Էլ գործընկերություն» իրավաբանական գրասենյակն առաջարկել է իրավագիտության ֆակուլտետում սահմանել կրթաթոշակ՝ ԵՊՀ առաջին ռեկտոր, իրավագետ Յուրի Ղամբարյանի անվան: Հ. Ժամհարյանը նաև նշեց, որ գործող 55 անվանական կրթաթոշակի ներկայացված թեկնածուներից 10-ի դեպքում է առաջադրված նոր թեկնածություն, իսկ բոլոր հայտերի հետ կապված փաստաթղթերը ներկայացված են:

Արտահայտվեցին. – Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանն առաջարկեց մտածել կրթաթոշակների չափերը բարձրացնելու հարցի շուրջ: ՈԻԽ նախագահ Ռ. Քարամյանը հայտնեց, որ կրթաթոշակների տրամադրման գործընթացը երբեմն տարբերվում է ֆակուլտետներում և առաջարկեց վերանայել տրամադրման կարգը՝ դրանում ֆակուլտետային ուսանողական խորհրդի դիրքորոշումը ևս հաշվի առնելու համար:

Որոշեցին. – 1. Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում 2014/2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից սահմանել ԵՊՀ առաջին ռեկտոր, պրոֆեսոր Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

2. 2015թ. փետրվարի 1-ից Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակը հատկացնել իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Եվա Գագիկի Սադոյանին:
3. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2014/2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

7. **Լսեցին.** – **ԵՊՀ ՈՒԳԸ 2013-14 ուստարվա գործունեության մասին:** ՈւԳԸ նախագահ Մ. Մալխասյանը ներկայացրեց նշված ժամանակահատվածում իրականացված միջոցառումների բնույթն ու քանակը՝ շեշտադրելով դրանցից առավել կարևոր համարվող մի քանիսը: Նա հակիրճ ներկայացրեց նաև ԵՊՀ ուսանողների և ասպիրանտների հաջողությունները միջազգային և հանրապետական ծրագրերում, ինչպես նաև ՈւԳԸ շրջանակներում իրականացված հրատարակությունները:

Որոշեցին. – Մ. Մալխասյանի զեկույցումն ընդունել ի գիտություն:

8. **Լսեցին.** – **Գիտական զեկույցում. «Հայերենի գործածության կարգավորման խնդիրները»:** Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Յու. Ավետիսյանն իր ելույթում անդրադարձ կատարեց հետևյալ բովանդակային կետերին. Էապես բարձրացնել հանրակրթական դպրոցներում հայոց լեզվի դասավանդման մակարդակը, հանրակրթական համակարգում ներդնել այլընտրանքային դասագրքերի համակարգը, համապատասխանություն ստեղծել կրթական ծրագրերում ամրագրված նյութի և դասագրքերի ու շտեմարանների բովանդակության միջև, վերանայել բուհերի ոչ բանասիրական ֆակուլտետներում իբրև հայերեն դասավանդվող առարկայի անվանումն ու բովանդակությունը, հումանիտար ֆակուլտետներում ավելացնել դասավանդվող նոր առարկայի ժամաքանակը և այլն:

Որոշեցին. – Յու Ավետիսյանի զեկույցն ընդունելի գիտություն:

Լսեցին. – ընթացիկ հարցեր:

1. Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի նախկին ռեկտոր Խոսե Սարուխանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց Մեքսիկայի ՌԻՆԱՄ համալսարանի կարևոր տեղն ու դերը այդ երկրի հասարակության մեջ ու հասարակական քաղաքական գործընթացներում: Նա նշեց, թե ինչ աշխատանքներ է իրականացրել այդ համալսարանի նախկին ռեկտոր Խոսե Սարուխանը Մեքսիկայում Հայոց Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ, ինչպես նաև ադրբեջանական հակահայ քարոզչամեթոդային դիմակայման ուղղությամբ. մասնավորապես, Մեխիկոյի կենտրոնից Հեյդար Ալիևի արձանի ապամոնտաժման գործում Սարուխանի խաղացած դերը: Ա. Սիմոնյանը հայտնեց նաև, որ Խոսե Սարուխանի աջակցությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում ՌԻՆԱՄ համալսարանի և ԵՊՀ-ի միջև համագործակցությունն ակտիվացնելու և նոր հարթակի վրա դնելու ուղղությամբ: Հաշվի առնելով այս ամենի շուրջ նաև ՀՀ արտգործնախարարության միջնորդությունը՝ Սիմոնյանն առաջարկեց գիտական խորհրդին Խոսե Սարուխանին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Որոշեցին. - Գիտության և կրթության ոլորտում պատկառելի ավանդի, հասարակական բեղուն գործունեության, Հայոց Ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործադրած մեծ ջանքերի և Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև համագործակցություն ծավալելու հանձնառության համար Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի նախկին ռեկտոր, Մեքսիկայի կենսաբազմազանության ազգային հանձնաժողովի համակարգող, պրոֆեսոր Խոսե Սարուխանին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

24.02.2015թ.